Ա. Հ. ՔՅՈՒՐՔՉՅԱՆ

ՄԻ ԷՋ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XVII դարի վերջին և XVIII դարի առաջին քառորդին հայ-ռուսական առևտրական հարաբերությունները նոր վերելք են ապրում։ Հզորացած Ռուսաստանը դուրս է գալիս Եվրոպայի մեծ պետություններ՝ շարքը։ Պետրոս I-ը շատ լավ էր հասկանում, թե ինչպիսի միջոցներով կարելի էր հասնել երկրի տնտեսական հզորության ամրապնդմանը։ Այդպիսի միջոցներից մեկը նա համարում էր առևտուրը։ Հենց այդ պատճառով, վերոհիշյալ ժամանակաշրջանում ավելի ընդլայնվեցին Ռուսաստանի տնտեսական կապերը ոչ միայն Արևմտյան Եվրոպայի երկրների, այլև Ռուսաստանին սահմանակից արևելյան երկրների և առաջին հերթին՝ Պարսկաստանի հետ։ Պետրոս I-ի բոլոր ջանքերը ուղղված էին այն բանին, որ մետաքսի ամբողջ առևտուրը Պարսկաստանի և Եվրոպայի միջև կատարվի Ռուսաստանի միջոցով։ Բացի դրանից, արևելյան մետաքսը Ռուսաստանին պետք էր նաև սեփական տնտեսական կարիքները բավարարելու, նոր զարգացող մանուֆակտուրային արդյունաբերությունը հումքով ապահովելու համար. հենց սրանում էր կայանում XVIII դարի առաջին քառորդի ռուս-պարսկական առևտրի տարբերությունը XVII դարի երկրորդ կեսի առևտրից[1]։

Հենց սրանով էլ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Պետրոս Մեծը արտակարգ ուշադրություն էր դարձնում արևելյան առևտրի վրա։ Նա բազմաթիվ արտոնություններ և մենաշնորհներ էր տալիս Ջուղայի հայ վաճառականներին, որոնց միջոցով մտադիր էր իրագործել իր պլանը՝ արևելյան ամբողջ առևտուրը, մասնավորապես մետաքսի առևտուրը տեղափոխել Վոլգա-կասպյան ուղին։

Ջուղայի հայ վաճառականները Ռուսաստանում դեռ Ալեքսեյ Միխայլովիչ ցարի օրոք արտոնյալ դիրք էին գրավում։ Այդ մասին Պ. Բուշևը իրավացիորեն նշում է, որ հայերը 1667 թ. ստացան այնպիսի առանձնաշնորհումներ, որոնց չէր կարողանում հասնել ոչ մի եվրոպական պետություն (բացառությամբ Հոլշտինայի 1636 թ.) երկար տարիների ընթացքում»[2]։

Պետրոս I-ի ժամանակ հայ վաճառականների նշանակությունը զգալիորեն աճեց, նրանց տրվող արտոնությունները մեծացան։

Հայ վաճառականներն իրենց բողոքներով դիմում էին անձամբ ցարին, խնդրելով իրենց պաշտպանել տեղական իշխանությունների կամայականություններից։ Օրինակ՝ 1706 թ. հոկտեմբերի 16-ին հայ վաճառական Ավանեսովը դիմում է Պետրոս I-ին՝ նրա ուշադրությունը հրավիրելով առևտրական պայմանագրի կետերի խախտման վրա[3]։

1708 թ. հայ վաճառականների անունից Սաֆար Վասիլևն է դիմում ինքնակալ թագավորին, խնդրելով ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ հայ վաճառականները գերմանական երկիր գնալով Արխանգելսկի վրայով, ճանապարհին հսկայական վնասներ են կրում օտարերկրացիների կողմից, ուստի խնդրում է թույլատրել հայ վաճառականներին առևտուրը կատարել Նովգորոդի և Ռուզոդևի վրայով[4]։ Ինչպես հայտնի է հայերի այս խնդիրքը կատարվում է։

Վերջապես, հայերի նկատմամբ Պետրոս Մեծի վարած հովանավորական քաղաքականության վառ ապացույցն է հանդիսանում նաև այն, որ, հաշվի առնելով հայ վաճառականների

---

[1] Н. Г. Куканова, Ирано-русские торговые отношения в конце XVII—начала XVIII вв., М., 1949, стр. 2.

[2] П. Бушев, Иранское посольство Фазл Али-бека в России, Сборник «Краткие сообщ. Ин-та народов Азии», № 39, стр. 46, М., 1963.

[3] Сборник документов «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», Ереван, 1964, док. № 6.

[4] Там же, док. № 11, стр. 28—30, а также ЦГАДА, ф. 100, 1708 г., д. 2, л. 1.

բազմաթիվ բողոքները, ցարը անձամբ իր ձեռքով գրեց. «Պարսկական առևտուրը բազմապատկել (умножить), և հայերին որքան հնարավոր է փաղաքշել, ինչքան կարելի է նպաստել, որ նրանք շահագրգռված լինեն շատ գալ (Ռուսաստան)»[5]։ Սենատը առաջնորդվելով այս հրամանով և, ի նկատի ունենալով Սաֆար Վասիլևի խնդրագիրը, որոշում է կայացնում հայկական առևտրի վերաբերյալ[6]։

Հարկ է նշել, որ այդ որոշումից հետո հայկական առևտուրը մտավ նոր փուլ. հայ վաճառականները խրախուսված իրենց ընձեռված հնարավորություններից, ավելի են աշխուժացնում մետաքսի առևտուրը։ Ռուսական կառավարությունը աշխատում է ընդառաջել նրանց և բավարարել բոլոր խնդրանքները։

1711 թ. մայիսի 20-ին Սաֆար Վասիլևը խնդրում է հայ վաճառականներին տալ ճանապարհորդական շնորհագրեր[7]։

1712 թ. փետրվարի 5-ին վրացահայ վաճառականները խնդրում են իրենց հնարավորություն տալ ազատ առևտուր անել այնպես, ինչպես պարսկահպատակ ջուղայեցի հայ վաճառականները, և ցարական կառավարությունը նրանց տալիս է այդ հնարավորությունը[8]։

1712 թ. օգոստոսին Պետրոս Մեծն անձամբ հետաքրքրվում է, որ Մերկուլ Աղազարովին Մոսկվայում տան ազատ առևտուր անելու իրավունք[9]։

Այս ցուցակը կարելի է երկարացնել, մանավանդ, որ հայկական գործերում հսկայական քանակությամբ փաստաթղթեր կան, որոնք վերաբերում են 1711 թ. մայիսի 14-ի սենատական որոշումից հետո ընկած ժամանակաշրջանին, բայց մեր կարծիքով, դրա կարիքը չկա. փաստերը վկայում են, որ հայ-ռուսական առևտուրը այդ ժամանակաշրջանում զգալիորեն աշխուժացավ։

1719 թ. հունիսի 6-ին, ըստ Կոմերց-կոլեգիայի որոշման, կառավարող սենատը նոր վճիռ է արձակում հայկական առևտրական ընկերության (կոմպանիայի) իրավունքների վերացման և նրանց՝ հայ վաճառականներին, մյուս օտարերկրացիներին հավասար իրավունքներ տալու մասին, ինչպես նաև հայկական առևտրական ընկերությանը տրված արտոնությունների վերացման մասին՝ տալով հայերին առևտուր անելու հնարավորություն մյուս օտարերկրացիների հետ համահավասար իրավունքներով։

Ինքնակալը հրամայեց ռուսական պետության մեջ հայկական առևտրական ընկերության առևտրի համար տրված իրավունքները վերացնել, որովհետև հայկական ընկերության համաձայնագրում գրված էր, որ ...«նրանք՝ հայերը, պարսկական երկրից մեծ քանակով (все полное число) մետաքս ներմուծեն այնքան, ինչքան յուրաքանչյուր տարի պարսկական երկրում արդյունաբերող մարդկանց մոտ կլինի, իսկ ուրիշ պետությունների վաճառական մարդկանցից ոչ մեկի հետ առևտուր չանել, գերմանական այլ երկիր, թուրքական պետության միջով կամ այլ ճանապարհով, մետաքսի հումքով, կամ այլ ապրանքներով չգնալ։ Նույնպես և եթե այլ պետությունների օտարերկրացիները կգան պարսկական պետություն մետաքսի հումք գնելու համար՝ հայերը այդ օտարերկրացիներից ոչ մեկին այդ մետաքսից չվաճառեն։ Եվ այդ առևտրի համար մաքսի հարցում, ի հակադրություն մյուս օտարերկրացիների, նրանց համար սահմանված են եղել շատ պարգևներ (արտոնություններ—Ա. Ք.), իսկ նրանց պահպանելու համար տրվել են ուղեկիցներ, որպիսիք ռուսական պետության մեջ ոչ մի առևտրականի չի տրվել։ Իսկ նրանք՝ հայերը, այդ պայմանագրում իրենց ցույց տվին որպես անուղղելիներ այն պատճառով, որ մեծ քանակությամբ մետաքս-հումք ռուսական պետության կողքով տանում են թուրքական հողը և այլ պետություններ, ինչը, ըստ պայմանագրի, նրանց չի վերապահվում անել։ 1711 թ. իր թագավորական մեծությունը նրանց՝ հայերին, ցույց տվեց բարեհաճ վերաբերմունք, որպեսզի նրանք ըստ նախկին պայմանագրի իրենց առևտուրը Ռուսաստանում բազմապատկեն, իսկ թուրքական հող և այլ պետություններ այլ ճանապարհով, բացի ռուսական պետությունից, չգնային։ Իր թագավորական մեծության բարեհաճությամբ, կառավարող սենատի որոշմամբ 1711 թ. մայիսի 14-ին նրանց՝ հայերին, ցույց տրվեց մեծ օգնություն, իսկ մաքսի գանձումը ալմաստներից ու չանազան այլ քարերից ու մարգարիտներից՝ վերացվեց, իսկ նրանք՝ հայերը, իր թագավորական մեծության՝ իրենց նկատմամբ ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքը արհամարհեցին և

---

5 ЦГАДА. ф. 248, кн. 1, л. 464

6 Сборник документов, док. № 24, стр. 51—53.

7 Там же, док. № 25, стр. 53, а также ЦГАДА, ф. 100. 1711 г., д. 3. л. 1.

8 Там же, док. № 27, стр. 60, 61.

9 Там же, док. № 33, стр. 77, а также ЦГАДА, ф. 100. 1712 г., д. № 1, л. 41—42.

Պարսկաստանում, իրենց առևտրում, արդյունք ցույց չտվեցին։ Եվ այդ պատճառով, պայմանագրի համաձայն, նրանց որված ազատությունները իր թագավորական մեծությունը հրամայեց թողնել (վերացնել—Ա. Ք.)։ Իսկ եթե նրանք՝ հայերը, ցանկանան ռուսական պետության մեջ առևտուր անել, ապա նրանցից իրենց այդ առևտրում, բոլոր դեպքերում վերցնել սովորական մաքսեր, ըստ ուրիշ պետությունների օտարերկրացիներից վերցվող առևտրական համաձայնագրերի։

Եվ դրա մասին մեծ ինքնակալի անվանական այս հրամանը Ս. Պետերբուրգում հրատարակել և մաքսերի գանձման համար նահանգներն ուղարկել մեր ինքնակալի հրամանները»[10]։

Սա անակնկալ կարող է թվալ, բայց միայն առաջին հայացքից։ Սա դեպքերի զարգացման արդյունք էր և նշան այն բանի, որ Պետրոսը չկարողացավ իրագործել իր նպատակները մետաքսի առևտրի հարցում։

Դեռ շատ վաղուց, համարյա իր թագավորության սկզբից, Պետրոսը անընդհատ զգուշացնում էր հայ վաճառականներին, որ նրանք աշխուժացնեն իրենց առևտուրը և ամբողջ պարսկական մետաքսը բերեն Ռուսաստան։ Այդ զգուշացումները շարունակվեցին նաև 1711 թվականի սենատական որոշումից հետո։ 1713 թ., երբ Ռուսաստանում էր գտնվում պարսկական դեսպան և առևտրական ներկայացուցիչ Ֆաղլ-Ալի-բեկը... «պատասխան հոդվածների 9-րդ կետում պետական կանցլեր Գ. Ի. Գոլովկինը արտահայտեց ռուսական կառավարության բուռն ցանկությունը Ալեքսեյ Միխայլովիչի՝ Ջուղայի հայերին տված (1667 թ. մայիսի 31-ին և 1673 թ. փետրվարի 7-ին Պարսկաստանից բերվող մետաքսի հումքի տարանցիկ առևտրի վերաբերյալ) շնորհագրերի գործունեության վերականգնման կապակցությամբ։ Նա խնդրում էր շահական կառավարությանը, որ ոչ միայն Գիլյանում, այլև մյուս նահանգներում ռուսական վաճառականներին հրամայվի (հնարավորություն տրվի—Ա. Ք.) մետաքսի հումքը գնել և Ռուսաստան տեղափոխել, որ նաև շահը համագործակցի Ռուսաստանի հետ, որպեսզի հայկական ընկերությունը կատարի իր վրա վերցրած պարտավորությունները, որովհետև հենց իրենք՝ հայերը այդ պայմանագիրը կնքել են, որպեսզի իրենց ամբողջ առևտուրը կատարեն ռուսական պետության վրայով։ Ընդ որում, կանցլերը համոզում էր, որ հայերին ճանապարհի մոտիկության և անվտանգության տեսակետից մեծ օգուտ կլինի»[11]։

Ռուսական կառավարության անհանգստությունը արտահայտվեց նաև Ա. Վոլինսկու շահին ներկայացրած պահանջներում[12]։

Այն, որ ցարական կառավարությունը շատ դժգոհ էր հայկական առևտրական ընկերության գործունեությունից, գաղտնիք չէր ոչ մեկի համար։ Դրա վառ ապացույցն էին այն լուրջ միջոցառումները, որ ձեռնարկում էր Պետրոս Մեծը մյուս հայ վաճառականների (որոնք չէին մտնում Ջուղայի ընկերության մեջ) նկատմամբ։

«Դոհ չլինելով Իսպահանի առևտրական ընկերության գործունեությունից՝ ռուսական կառավարությունը փորձում էր համաձայնության գալ այն հայ վաճառականների հետ, որոնք կապված չէին այդ ընկերության հետ[13]։ Հայ վաճառականները (որոնք չէին մտնում Ջուղայի ընկերության մեջ) առևտուր էին անում Ռուսաստանում և Ռուսաստանի վրայով նաև XVII դարի երկրորդ կեսին, բայց այժմ նրանց շահագրգռելու համար Պետրոս Մեծը ցանկանում էր նրանց այն իրավունքներ տալ՝ հավասարեցնելով այդ իրավունքները Ջուղայի ընկերության առևտրականների իրավունքներին։ Այդ տեսակետից շատ հատկանշական է այն վերաբերմունքը, որ Պետրոս I-ը ցույց տվեց վրացահայ վաճառականների խնդրանքին. 1712 թ. փետրվարի 5-ին վրացահայ վաճառականները դիմեցին Պետրոս Մեծին՝ խնդրելով տալ իրենց Ռուսաստանում առևտուր անելու մենաշնորհ։

Մի քանի օր անց, Պետրոսը վրացահայ վաճառականներին ընձեռում է այդ իրավունքները։ «1712 թվական, փետրվարի 12.

Վրացահայերի առևտրի մասին ըստ պայմանագրի։

1712 թվականի փետրվարի 12-ին մեծ ինքնակալ թագավոր և մեծ իշխան Պետրոս Ալեքսեևիչը բարեհաճեց լսել վրացահայեր Մամաչանի, Ավթանդիլի, Հարությունի՝ ընկերներով

---

[10] «Сборник документов», док. № 56, стр. 169, 170, см. также ПСЗРИ, т. V, док. № 3385.

[11] П. Бушев, указанная статья, стр. 45.

[12] «Сборник документов», док. № 44, стр. 115.

[13] Аш. Иоаннисян Предисловие сборника «Армяно-русские отношения в I трети XVIII века», Ер., 1964, стр. XII.

տված խնդրագիրը և հրամայեց, որ եթե նրանք Աստրախան կգան և կբերեն առևտրի համար մեծ քանակությամբ մետաքս-հումք և այլ ապրանքներ, ինչպես պարսկահայերն են բերում, նրանց կթույլատրվի ազատորեն դալ Աստրախան և [Նոտանոֆ] ազատ առևտուր կանեն ինչպես Մոսկվայում, այնպես էլ Աստրախանում, ինչպես պարսկահայերն են առևտուր անում, և մաքսու փոխադրավարձ վերցնել նրանցից այնպես, ինչպես պարսկահայերից։ Իսկ երե նրանք նշանակալից չափով մետաքս չբերեն, այլ միայն գան կտորներով ու փոքր ապրանքներով, նրանցից վերցնել այնքան մաքս, որքան վերցնում են օտարերկրացիներից ըստ առևտրական տարիֆի»[14]։

Մենք ընդգծել ենք, որպեսզի ցույց տանք, թե Պետրոս Մեծը ինչպիսի առաջնակարգ նշանակություն էր տալիս Ռուսաստան ներմուծվող պարսկական մետաքսին։ Համարձակ կարելի է ասել, որ բոլոր արտոնությունները, որոնք տրվում են հայ վաճառականներին, պայմանավորված են միայն դրանով։ Ցանկանալով աշխարհի տարբեր մասերում սփռված հայ վաճառականներին ներգրավել ռուս-պարսկական առևտրում և նրանց օգտագործել իր վիթխարի պլանները իրականացնելու համար, Պետրոս Մեծը ցուցումներ էր տալիս իր առևտրական կոնսուլներին, որպեսզի վերջիններս առևտրական արտոնություններով դեպի Ռուսաստան հրապուրեն հայ վաճառականներին։ Նույնիսկ Վոլինսկին, ինչպես նշում է ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը, իր՝ Շամախիում եղած ժամանակ օգնություն ցույց տվեց Ղարաբաղի հայ վաճառական Մանուկովին, որ առաջ առևտուր էր անում Հալեպում, իսկ հիմա որոշել էր փնտրել երջանկությունը Ռուսաստանում։ Վոլինսկին ողջունեց Մանուկովի նախաձեռնությունը և ցանկացավ, որպեսզի նրա գովասանքի արժանի քայլին հետևեն նրա հայրենակիցները[15]։

Պետրոս Մեծը մանավանդ շատ էր շահագրգռված, որպեսզի իր կողմը գրավի Զմյուռնիայի և Հալեպի հայ վաճառականներին։ Հենց այդ իսկ պատճառով աշխատում էր զանազան արտոնություններով շահագրգռել նրանց և առևտուրը տեղափոխել Ռուսաստան։

Այդ տեսակետից ամենակարևոր փաստը թերևս հանդիսանում է 1717 թ. հունվարի 28-ին Զմյուռնիայի հայ վաճառական Պետրոս Աբրոյին և նրա եղբայրներին Պետրոս Առաջինի կողմից տրված առևտրական շնորհագիրը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ առևտրականները մեծ գործարքներ են կատարում աշխարհի տարբեր երկրներում, Պետրոսը ցանկանում է նրանց հրապուրել դեպի Ռուսաստան, քանի որ նրանք իրենց օրինակով մեծ ազդեցություն կթողնեին իրենց ազգակից հայ վաճառականների վրա։ Այդ պատճառով էլ նա նրանց տալիս է այնպիսի հնարավորություններ, ինչպիսին չէր տվել մյուս հայ վաճառականներին։ Մասնավորապես նրանց թույլատրվում է ազատ ապրել և առևտուր անել Պետերբուրգում և մյուս քաղաքներում ոչ միայն մետաքսով, այլև զանազան այլ փոքր ապրանքներով[16]։

Բոլորովին պատահական չէր Պետրոս Մեծի այս ձգտումը Զմյուռնիայի և Հալեպի հայ վաճառականներին ներգրավել Պարսկաստանի հետ ունեցած Ռուսաստանի առևտրում։ Զմյուռնիան և Հալեպը մեծ նշանակություն ունեին Թուրքիայի համար, որպես առևտրական կենտրոններ։

Իհարկե, այս բոլորը Պետրոս Մեծը կատարում էր միմիայն մի նպատակով՝ առևտրական մրցակիցներին, առաջին հերթին թուրքերին ուժեղ հարված հասցնելու և մետաքսի ամբողջ առևտուրը Վոլգա-Կասպյան ուղին տեղափոխելու համար։ Բայց, ինչպես նշում է Աշոտ Հովհաննիսյանը, «այդ բոլոր փորձերը ապարդյուն անցան»[17]։

Չհաջողվեց Պետրոս Մեծի նաև մեկ ուրիշ մտադրությունը իր նպատակի իրագործմանը հասնելու հենց իրենց՝ ռուսական վաճառականների օգնությամբ, որովհետև ...«ռուս վաճառականները համոզվեցին, որ այդ առևտրում ոչ միայն իրենց ամբողջ ունեցվածքը, այլև կյանքը կորցնելու ռիսկը շատ մեծ է։ Արդեն մինչև 1712 թ. միայն շատ քիչ վաճառականներ (խոսքը ռուս վաճառականների մասին է—Ա. Ք.) էին խիզախում այդ երկարատև և վտանգավոր ճանապարհորդությունը (ձեռնարկել), իսկ Շամախին Դաուդ բեկի և Սուրխայի կողմից թալանվելուց հետո առևտուրը Պարսկաստանի հետ անկում ապրեց»[18] և պարզ է, որ խնդրի կատարումը պետք է ընկներ Ջուղայի հայ վաճառականության ուսերին, բայց ինչպես պատմությունը ցույց

---

[14] Сборник документов, док. № 28, стр. 60—61.

[15] Аш. Иоаннисян, Предисловие сборника, стр. XII.

[16] Сборник документов, док. № 42, стр. 105—107, см. также «Собрание актов, относящихся к образованию истории армянского народа, М., 1833 г., ч. 1, 2, 3, стр. 158—160.

[17] Аш. Иоаннисян, там же, стр. XII.

[18] Е. М. Эпштейн, «А. П. Волынский как государственный деятель и дипломат», рук. канд. дис. Ленинград, 1949, стр. 55.

տվեց, հայ վաճառականները չկատարեցին պայմանագրով իրենց վերցրած պարտավորությունները։

Ինչն էր դրա պատճառը։

Կուկանովան անդրադառնալով այդ հարցին, նշում է, որ չնայած ռուսական կառավարության կողմից Ջուղայի հայ վաճառականության նկատմամբ ցուցաբերած բարեհոգի վերաբերմունքին... «Ջուղայի ընկերության վաճառականները, որոնք կազմում էին հայ վաճառականների ազդեցիկ, բայց քանակական տեսակետից փոքր մասը, ոչ միայն չկատարեցին պայմանագրի պարտավորությունները, այլև խոչընդոտում էին ուրիշ հայկական առևտրական ընկերություններին, ինչպես նաև ռուս վաճառականությանը, մետաքսի հումքը Ռուսաստան ներմուծելու հարցում։ Նրանք ձգտում էին լրիվ մոնոպոլիայի ենթարկել մետաքսի արտահանումը արևմուտք, որ նշանակալից վնաս էր հասցնում Ռուսաստանում մետաքսի հումքի հաջող առևտրին»[19]։ Ինչպես տեսնում ենք Կուկանովան հայ վաճառականների կողմից իրենց պարտավորությունները չկատարելու պատճառը համարում է ջուղայեցի հայ վաճառականների եսասիրական ցանկությունը՝ մոնոպոլիայի ենթարկել մետաքսի ամբողջ առևտուրը։ Գրեթե նույն կարծիքն է հայտնում նաև Բուշևը, որը գրում է. «Հայկական ընկերությունը չկատարեց իր պարտավորությունները Իրանից Ռուսաստանի վրայով տարանցիկ առևտրի միջոցով մետաքսի հումքը Եվրոպա մոնոպոլ կերպով փոխադրելու հարցում.... Ավելին, մի քանի ջուղայեցի վաճառականներ ակտիվ կերպով խանգարում էին ռուս վաճառականներին Իրանում մետաքսի հումքի գնման հարցում։ Այսպես, 1711 թ. հայ վաճառականները իրենց կողմից կաշառված Շամախի խանի միջոցով խանգարեցին ռուսական վաճառականներին մետաքս-հումք Ռուսաստան տեղափոխելու հարցում»[20]։

Բայց մրցակցության այս տեսակետը նորություն չէ պատմագրության մեջ։ Վերոհիշյալ հեղինակները իրենց այս թեզն առաջ քաշելիս հիմնվում են Վոլինսկու փաստերի վրա։ Ինչպես հայտնի է, Պարսկաստանում դեսպան եղած ժամանակ Վոլինսկին բազմաթիվ հետաքրքիր տեղեկություններ է թողել իր օրագրում Իրանի զանազան բնակավայրերի, քաղաքների, տնտեսության, բնակչության զբաղմունքի մասին։ Նա անդրադառնում է նաև Ջուղայի հայ վաճառականությանը։ Նրա օրագրի այդ հատվածը մենք մեջ ենք բերում ըստ Զեվակինի «Азербайджан в начале XVIII в.» գրքի։ «Պարսկահպատակներից վաճառականության մեջ ամենանշանավորը հայերն են, իսկ առանձնապես Ջուղայի հայկական ընկերությունը (Ջուղա կոչվում է Իսպահանի մի արվարձանը—ընդգծումը հեղինակինն է—Ա. Ք.)... Եվ չնայած շատերը կցանկանային առևտուրը Ռուսաստանի վրայով կատարել, բայց այդ բոլորին խոչընդոտ էին հանդիսանում ջուղայեցիք միայն իրենց շահի համար, որի համար (խանգարելու համար—Ա. Ք.) քիչ կաշառք չեն տալիս ինչպես շահական արքունիքին, այնպես էլ Շամախիի և Գիլյանի կառավարիչներին, որպեսզի ուրիշ ոչ ոքի (թույլ չտան) իրենց ապրանքները Ռուսաստանի վրայով տանել՝ իրենց ընկերություններից բացի և մետաքսի հումքը ոչ միայն տանել, այլև գնել էլ չեն թողնում ինչպես օտարերկրացիներին, այնպես էլ իրենց (ոչ ջուղայեցի հայ վաճառականներին)»[21]։

Ինչպես տեսնում ենք, Կուկանովան և Բուշևը փաստորեն կրկնում են Վոլինսկուն։

Այդ հարցին անդրադառնալով մեկ ուրիշ պատմաբան՝ Մարկովան, ջուղայեցի հայ վաճառականների կողմից իրենց պարտավորությունները չկատարելու պատճառը համարում է այդ վաճառականության ներսում եղած անմիաբանությունը։ «Բայց հենց իրենց՝ հայ վաճառականների շարքերում չկար համաձայնություն Ռուսաստանի վրայով առևտուրը կատարելու հարցում։ Նա (հայկական ընկերությունը—Ա. Ք.) չկատարեց իր վրա վերցրած պարտավորությունները և այդ պատճառով էլ գրկվեց նախկինում իրեն ընձեռված արտոնություններից»[22]։ Իսկ Լիսցովը անդրադառնալով այդ հարցին, արձանագրում է լոկ այն փաստը, որ հայ վաճառականները զրկվեցին իրենց արտոնություններից, որովհետև մետաքսի հումքը ռուսական պետության կողքով մեծ քանակությամբ տանում էին թուրքական երկիրը, ինչ որ ըստ պայմանագրի, նրանց չէր թույլատրվում անել[23]։

---

[19] Н. Г. Куканова, указ. соч., стр. 154 - 155.

[20] П. Бушев, указ. статья, стр. 45.

[21] Зевакин Евг., Азербайджан в начале XVIII в., Баку, 1929, стр. 8 (о компании Джульфинской).

[22] О. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке., М., 1966, стр. 65.

[23] В. Лысцов, Персидский поход Петра I 1722—1723 гг., М., 1951, стр. 57.

Այս հարցը լուսաբանվել է նաև դասագրքում[24]։

Ինչպես տեսնում ենք, բավական թվով պատմաբաններ են անդրադարձել տվյալ պրոբլեմին, բայց նրանք փաստորեն միայն արձանագրում են կատարվածը, նշելով, որ Ջուղայի հայ վաճառականությունը չկատարեց իր պարտականությունները, և Պետրոս Մեծը 1719 թ. հունիսի իր հրամանագրով վերացրեց հայկական ընկերությանը տրված արտոնությունները։ Փաստորեն վերոհիշյալ հեղինակներից և ոչ մեկը չի պատասխանում այն հարցին, թե ի՞նչ պատճառներով Ջուղայի հայկական առևտրական ընկերությունը չկատարեց պայմանագրի կետերը (պարսկական մետաքսի առևտրի վերաբերյալ)։ Լավագույն դեպքում այդ հեղինակները կատարված ակտը բացատրում են (ինչպես արդեն նշեցինք) վաճառական ընկերությունների միջև եղած մրցակցությամբ (Կուկանովա, Բուշև) կամ էլ հայ վաճառականության միջև եղած անմիաբանությամբ (Մարկովա)։ Մենք, իհարկե, չենք ժխտում վերոհիշյալ տեսակետները, առանձնապես վաճառականների միջև եղած մրցակցության հանգամանքը։ Ավելին. մենք ինքներս հակված ենք կարծելու, որ դա թերևս հանդիսանում է այն ամենակարևոր պատճառը, որի հետևանքով հայկական առևտրական ընկերությունը չկատարեց 1667 և 1673 թվականների առևտրական պայմանագրերի պարտավորությունները։ Բայց սահմանափակվել միայն դրանով, նշանակում է ուշադրություն չդարձնել մյուս այն պատճառների վրա, որոնք մեր կարծիքով, նույնպես էական դեր խաղացին Ջուղայի առևտրական ընկերության կողմից իր պարտավորությունները չկատարելու պարսկական մետաքսի ամբողջ առևտուրը Վոլգա-կասպյան ուղի տեղափոխելու հարցում։

Մենք առաջին այդպիսի կարևոր պատճառը համարում ենք ռուսական իշխանությունների կողմից հայ վաճառականների նկատմամբ կատարվող կամայականությունները։ Չնայած Պետրոս Մեծի կողմից հայ վաճառականների նկատմամբ տարվող հովանավորական քաղաքականության, ռուսական տեղական իշխանությունները չարաշահելով իրենց իրավունքները, զանազան խոչընդոտներ էին հարուցում հայ-ռուսական առևտրի հարցում։

Օրինակ՝ «1713 թվականի դեկտեմբերի 23. Հարձակվեցին հայերի վրա և խլեցին սահնակներից մի հակ մետաքս»։ Սաֆար Վասիլևը խնդրագրում պահանջում է հետաքննել այդ գործը, պատժել մեղավորներին և կողոպուտը վերադարձնել տիրոջը[25]։

Նույնքան ուշագրավ է 1714 թ. մայիսի 10-ի հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչների դիմումը, որով խնդրում են հաշվի առնել, որ հայկական առևտրական ընկերությունը միայն այդ տարի 40 հազար ռուբլու մաքս է վճարել պետական գանձարանին, ուստի հարկավոր է հայ վաճառականներին պաշտպանել ռուսական իշխանությունների կամայականություններից[26]։ Նույն այդ գործում կա մի փաստաթուղթ, ուր ասված է, որ 1714 թվականին հայ վաճառական Լազար Գասպարովը իր որդու և թոռան հետ թալանվում է և ծեծվում Դումայի դպիր Լյուբիմ Դոմնինի որդիներ Սերգեյի և Վոլդեմարի կողմից[27]։

Բանը հասնում է այնտեղ, որ գործին խառնվում է անգամ կանցլեր Գոլովկինը. օրինակ. 1714 թ. հուլիսի 30-ին կանցլեր Գոլովկինը հետաքրքրվում է Սաֆար Վասիլևի և առևտրական ընկերության խնդրագրերով և պահանջում է համապատասխան մարմիններից... («Այս (հրամանը) ստանալուն պես դեսպանական պրիկազից Պրեոբրաժենսկի պրիկազ ուղարկել հիշեցում, որ այն հայկական ապրանքները հյուրաբակերում ((гостинный двор) կալանքից ազատեն և տան իրենց՝ հայերին, հենց այդ պրիկազից)։ Եթե այդ Պրեոբրաժենսկի պրիկազում հայկական կրնքված ապրանքները ազատել չցանկանան և դանդաղեն, դուք ինքներդ այդ հայկական ապրանքներն ազատեցեք և ...տվեք հայ Իվան Նիկիտինին ընկերների հետ»[28]։

Բայց, իհարկե, վերոհիշյալից չպետք է հանգել այն եզրակացության, թե հայ վաճառականները իրենք ոչ մի բանով չէին խախտում առևտրական պայմանագրերի կետերը։ Նրանք շատ դեպքերում և իրար էին խաբում և մաքսատան աշխատողներին. ռուսական իշխանությունները հայ վաճառականներին հիմնականում մեղադրում էին այն բանում, որ վերջիններս խախտելով պայմանագրի կետերը, առևտուր էին անում տներում և կրպակներում, անգամ առանց տեղական իշ-

---

24 «Очерки истории СССР», XVIII в. первая часть, М., 1954, стр. 147.

25 ЦГАДА, ф. 100, 1713 г., д. 1, л. 48 об., 49 об.

26 ЦГАДА, ф 100, 1714 г., д. № 1, л. 142—143 об.

27 Там же, л. 146—158 об.

28 Там же, л. 213—214.

Ռուսական տեղական իշխանությունների կամայականությունների մասին փաստերը սիրով մեզ է տրամադրել Վ. Ոսկանյանը։ Հետագայում մենք այդ նույն փաստաթղթերը ուսումնասիրեցինք տեղում՝ Մոսկվայի հին ակտերի պետական կենտրոնական արխիվի հայկական գործերում։

խանության գիտության։ Այդ մասին նշվում է «Армяно-русские отношения в первой трети XVIII века» ժողովածուի N 39 փաստաթղթում։

Կրպակներում և տներում վաճառք կատարելու փաստը այնքան էր անհանգստացրել ռուսական իշխանություններին, որ նրանք 1716 թ. մայիսի 22-ին օրենք հրատարակեցին հայերի՝ ըստ տրակտատի, առևտրի մասին...

«...Քանի որ հայերը մեծ ազատություններ են թույլ տալիս իրենց առևտուր անելու ժամանակ, ինչ որ նրանց ըստ տրակտատի չի թույլատրվում, իսկ առանձնապես արտասահմանյան ապրանքները իրենց կրպակներում և տներում վաճառում են, որից բողոքներ են առաջանում, դրա համար խնամքով նայել, որ նրանք իրենց առևտուրը կատարեն այնպես, ինչպես տրակտատով է թույլատրվում և դրանից բացի ավելի ուրիշ ոչինչ չթույլատրել և առանձնապես նայել, որ նրանք արտասահմանյան ապրանքները իրենց խանութներում և տներում չվաճառեն»[29]։ Տրակտատի կանոնների խախտման այս փաստերը նույնպես վճռական նշանակություն ունեցան ռուսական կառավարության կողմից հայ վաճառականների արտոնությունների վերացման հարցում։ Հենց սրա հետ կապվում է նաև մեկ ուրիշ ոչ պակաս կարևոր հանգամանք. հայ վաճառականները չկարողացան կատարել իրենց վրա վերցրած պարտավորությունները նաև այն պատճառով, որ ռուսական իշխանությունները վարում էին խստիվ ընդգծված հովանավորական (պրոտեկցիոն) քաղաքականություն։ Հենց վերոհիշյալ կրպակներում և տներում առևտուր չանելու հրամանը դրա տիպիկ արտահայտությունն էր։ Պրոտեկցիոնիզմը իր արտահայտությունը գտավ նաև մերձկասպյան պրովինցիաների նկատմամբ տարվող առևտրական քաղաքականության մեջ... «Ռուսական վաճառականության շահերի պաշտպանությունը ընկած էր Պետրոսի կողմից մերձկասպյան նահանգներում տարվող առևտրական քաղաքականության առաջին պլանում»[30]։

Վերջապես երրորդ կարևոր պատճառը, որի հետևանքով Ջուղայի հայկական առևտրական ընկերությունը չկատարեց իր վրա դրված պարտականությունները, մենք համարում ենք այն, որ հայ վաճառականները առանձնապես շահագրգռված էին դեպի առևտրի թուրքական ուղին։ Ի դեպ, Կուկանովան առևտրական ընկերությունների մրցակցության մասին իր փաստարկը առաջ բաշելուց մի քանի էջ հետո մի համարձակ ենթադրություն է անում. «Ինչ վերաբերում է ջուղայեցիներին, ապա նրանց դեպի Ռուսաստան կողմնորոշվել չցանկանալը բացատրվում է թերևս, ոչ միայն նրանց պայքարով ռուսական մրցակցության դեմ, այլ նաև նրանց, Մերձավոր արևելքում ունեցած առևտրի շահագրգռվածությամբ, որտեղ նրանք հնարավորություն ունեին էժան գնով գնելու արևմտաեվրոպական ապրանքներ, ինչ որ անհնար էր Ռուսաստանում, ուր արգելվում էր անմիջական շփումը եվրոպական և արևելյան վաճառականների միջև հենց իր տերիտորիայում։ Իսկ Զմյուռնիայում, Կոստանդնուպոլսում ջուղայեցի վաճառականները կարող էին ձեռք բերել եվրոպական ծագում ունեցող շատ անհրաժեշտ ապրանքներ դրա համար չվճարելով արևելքի և արևմուտքի միջնորդներին, որոնց դերը իր վրա էր վերցնում ռուսական վաճառականությունը»[31]։

Կուկանովայի անկեղծ խոստովանությունը շատ կարևոր փաստ է, որի վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել, թե չէ բանից պարզվում է, որ հայ վաճառականները, որոնց ճարպկության, բանիմացության և գործարարության մասին բազմաթիվ վկայություններ կան դրականության մեջ՝ առանց որևէ պատճառի թողնում են Վոլգա-կասպյան էժան, ապահով և շահութաբեր ուղին և ձգտում են առևտուրը կատարել այնպիսի ճանապարհներով, որոնք անապահով էին և ուր նրանք ամեն րոպե ենթակա էին կողոպուտի։ Հենց Կուկանովայի վերը հիշատակված մեջբերումից ելնելով, մենք շատ լավ կարող ենք պատկերացնել այն մեծ եկամուտները, որը ստանում էր հայ վաճառականը թուրքական հողում առևտուր անելիս, որ նա յոլա էր գնում առանց միջնորդների։

Վերոհիշյալ հեղինակները փաստորեն ոչ մի խոսք չեն ասում այն բացասական դերի մասին, որ խաղացել են սուլթանական Թուրքիան և շահական Պարսկաստանը այս հարցում (հայկական առևտրական ընկերության կողմից իր պարտականությունը չկատարելու հարցում)։

Հայտնի է, որ պարսկական մետաքսի մոնոպոլ առևտրի հարցում Ռուսաստանից բացի շահագրգռված էին շատ երկրներ, այդ թվում և Թուրքիան, որը, իհարկե, համեմատած Ռուսաստանի հետ, առաջնություն ուներ այդ հարցում. առևտուրը հիմնականում կատարվում էր իր տերիտորիայի վրայով։ Եվ ահա, երբ հզոր ու եռանդուն միապետը (խոսքը Պետրոս Մեծի մասին է—Ա.Ք.)

---

[29] «Сборник документов», док. № 37, стр. 56, см. также ПСЗРИ, т. IV, док. № 3022.
[30] В. Лысцов, указ. соч., стр. 60.
[31] Н. Г. Куканова, указ. соч., стр. 161—162.

ցանկանում էր գործերի ընթացքը փոխել իր օգտին, մի՞թե սուլթանական Թուրքիան ամեն միջոցի չէր դիմի ճնշում գործադրելու շահական Պարսկաստանի վրա, որպեսզի վերջինս խանգարի հայ վաճառականներին կատարելու 1667 և 1673 թթ. պայմանագրերով իրենց վրա վերցրած պարտավորությունները։

Կուկանովան, որ շատ անգամ էր խոսում Ռուսաստանի և Թուրքիայի պարսկական մետաքսի առևտրի հարցում ունեցած մրցակցության մասին, մոռանում է նշել, որ հայերը շատ անգամ չէին կարողանում կատարել իրենց վրա վերցրած պարտավորությունները, որովհետև պարսկական իշխանությունները Թուրքիայի դրդմամբ խանգարում էին դրանում։ Հենց նույն հեղինակը՝ Ադամ Օլեարիին վկայակոչելով նշում է, որ «պարսիկները և թուրքերը իրենց միջև պայմանագիր էին կնքել, որ նրանց առևտրական մարդիկ ռազմական (նույնիսկ ռազմական—Ա. Ք.), ինչպես նաև խաղաղ ժամանակ անարգել երթևեկեն և առևտուր անեն ինչպես բուն երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս»[32]։ Եվ մի՞թե Պարսկաստանը, որ այդպիսի համաձայնագիր ուներ Թուրքիայի հետ, չէր ստիպի իր հպատակ հայ վաճառականներին առևտուրը կատարել թուրքական հողում, չնայած Ռուսաստանին ուրվող ուռատ խոստումներին։ Մարկովան, որ հայերի կողմից պարտավորությունները չկատարելու հիմնական պատճառը համարում էր միայն այն, որ հայ վաճառականների միջև համաձայնություն չկար Ռուսաստանում կատարվող առևտրի հարցում, իր արժեքավոր աշխատության մեջ, մի քանի էջերում բազմաթիվ հետաքրքիր փաստեր է բերում, որոնք գալիս են հաստատելու մեր այն պնդումը, թե թուրքական կառավարությունը ճնշում էր գործադրում պարսկական իշխանության վրա, որպեսզի վերջինս ստիպի Ջուղայի հայ վաճառականներին առևտուրը թուրքական հողում կատարելու։ «Բայց պարսկական առևտրում շահագրգռված էր նաև Թուրքիան։ 1716 թ. Իսպահան ուղարկված նրա պատվիրակությունը պնդում էր, որպեսզի մետաքսի հումքի ամբողջ առևտուրը կատարվի Թուրքիայի վրայով»[33]։ Այս տրադիցիոն քաղաքականությանը Թուրքիան հետևում էր միշտ։ «Այդ նույնը կրկնվեց հինգ տարի անց, 1721 թվականին, երբ Ռուսաստանի դեսպան Ֆլորիա Լենևինին հայտնելով թուրքական դեսպանության Իսպահան ժամանելու մասին, գրում էր. «Սուլթանը չգիտեմ ինչպիսի միջոցներով պահանջում է շահից, որպեսզի ամբողջ Գիլյանի առևտուրը տարվի նրա մարզում, այլ ոչ Կասպիական ծովով»[34]։

Ինքը՝ պարսկական կառավարությունը, առանց այն էլ բարեհաճ վերաբերմունք չուներ հայ վաճառականության վերաբերմամբ, դեպի Ռուսաստանն ունեցած նրանց ձգտումների պատճառով։ Ճիշտ է, նա հաշվի էր նստում նրանց հետ, որովհետև հիմնականում հայ վաճառականներն էին բազմապատկում Պարսկաստանի առևտրական հզորությունը, բայց այդ չէր նշանակում, թե հայ վաճառականները չէին ենթարկվում հալածանքի ամեն մի հարմար առիթով։ Այդ հալածանքներն ուժեղացան մանավանդ այն ժամանակ, երբ հայ վաճառականները սկսեցին ավելի աշխույժ առևտուր անել Ռուսաստանում։

«Որչափ և էր արդիւնաւոր վաճառականութիւնն ջուղայեցւոց ընդ Ռուսաստանի, այնչափ և էր վտանգաւոր վերադարձն նոցա ի Պարսկաստան, ուստի որ ուրեք էր տեղի առևտրաց իւրեանց բազումք ի վաճառականաց Ջուղայու հաստատեցին ի նոսա զտեղի բնակութեան իւրեանց»[35]։

Ահա սրանք էին հիմնականում, մեր կարծիքով, այն պատճառները, որոնք խանգարեցին Ջուղայի հայ վաճառականությանը կատարելու 1667 թ. և 1673 թ. պայմանագրերի կետերը։

Բայց Ռուսաստանի տիրակալը այն մարդկանցից չէր, որոնք այդքան հեշտությամբ հրաժարվում են իրենց նպատակների իրագործումից։ Այն, ինչ չհաջողվեց լուծել ոչ Ջուղայի հայ վաճառականների, ոչ պարսիկ վաճառականների և ոչ էլ հենց ռուս առևտրականների օգնությամբ, պիտի լուծվեր արևելյան պարսկական արշավանքի ժամանակ։ Արշավանքը դարձել էր օրակարգի ամենահրատապ հարցը, որովհետև... «Տիրելով մերձկասպյան պրովինցիաներին, Թուրքիան կարող էր խանգարել ռուսական առևտրին»[36]։

Երբեմն հարց է ծագում, որ եթե ռուսական կառավարությունը կարողանար Ջուղայի հայ վաճառականության միջոցով իրագործել իր նպատակները մետաքսի առևտրի հարցում, ապա նա հրաժարվե՞ր պարսկական արշավանքից, որպես հարցի լուծման միջոց։

---

[32] Н. Г. Куканова, указ. соч., стр. 80.

[33] О. Маркова, указ. соч., стр. 66.

[34] Там же, стр. 66

[35] Տէր Հովհաննէսեանց Հար., Պատմութիւն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1888, էջ 176։

[36] Г. Пайчадзе, Поход русских войск на побережье Каспийского моря в 1722—1723 гг. и Грузия, автореферат канд. дис., Тбилиси, 1955, стр. 6.

Պատասխանել այս հարցին, նշանակում է նաև պատասխանել այն հարցին, թե Ռուսաստանը այդ արշավանքում ինչ նպատակներ էր հետապնդում՝ միայն տնտեսակա՞ն, թե նաև քաղաքական։ Իսկ սովետական պատմագրությունը (Նիկիֆորով, Պայչաձե, Տեր-Ավակիմովա և այլք) ապացուցել են, որ այդ արշավանքը հետապնդում էր ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական նպատակներ։ Ուստի այն բացատրել միայն տնտեսական նկատառումներով, սխալ է։ Իսկ թե ինչպիսի բնույթ ընդունեցին հայ-ռուսական առևտրական հարաբերությունները այդ արշավանքի հետևանքով, այդ մասին կխոսենք մեկ ուրիշ անգամ։